ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< >> _____ 2019թ. ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____ հեռ. (0312) 3-26-10

ՈՒՂԵՐՁ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 28-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ հայրենակիցներ

Ի սրտե շնորհավորում եմ Հայաստանի Հանրապետության Անկախության 28-րդ տարեդարձի առթիվ:

Հայ ժողովուրդն առաջնորդվելով արժանապատվության վեհ գաղափարով՝ 28 տարի առաջ Հայաստանը հռչակեց անկախ, ինքնիշխան պետություն: Այն հայ ժողովրդի միասնականության դրսևորումն էր, որի շնորհիվ այսօր մենք մեր պատմական հայրենիքի մի փոքր հատվածում արարելու և ապագային միտված նոր սերունդ դաստիարակելու հնարավորություն ենք վաստակել:

Անկախության տոնն այս տարի կարևորվում է նաև նրանով, որ ՀՀ կառավարության որոշմանբ տոնական միջոցառումների կիզակետը Շիրակի մարզն է, ինչը մեծ պատիվ և պատասխանատվություն է:

Բոլորիս մաղթում եմ տոնական բարձր տրամադրություն, խաղաղություն և բարեկեցություն:

Աստված պահապան մեր հայրենիքին:

Հարգանքով՝

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ